Հայրենագիտություն 5-րդ դասարան

Շաբաթական 1 դասաժամ

Ժամ	**Էջ 3-35**	**Թեմա 1: Մեր երկիրը (5 ժամ)**
Նպատակը	• Իմանա, թե ի՞նչ է հայրենիքը: • Կարողանա ներկայացնել Հայկական լեռնաշխարհը: • Պատկերացում կազմի բնօրրան, հայրենիք, պատմական Հայաստան հասկացությունների մասին: • Գիտելիքներ ունենա Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի, օգտակար հանածոների, գետերի, լճերի, լեռների և քաղաքների մասին: • Գիտելիքներ ունենա Արցախի Հանրապետության աշխարհագրական դիրքի, անկախության, հերոսների, վանքերի և եկեղեցիների, գետերի, լեռների մասին: • Իմանա, թե ի՞նչ է ծննդավայրը, ի՞նչ է ավանդապատումը:	
Վերջնար-դյունքները	• Ներկայացնի իր հայրենիքը: • Կարողանա ներկայացնել Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը. սահմանները, գետերը, լճերը, լեռնագագաթները: • Կարողանա բացատրել, թե ի՞նչ է բնօրրանը, կարողանա ներկայացնել Պատմական Հայաստանի տարածքները և նրա տարածքային կորուստների պատճառներ: • Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Հայաստանի Հանրապետությունը, թվարկի լեռները, գետերը, լճերը և խոշոր քաղաքները: Կարողանա բացատրել, թե ի՞նչ է օգտակար հանածոն և հանքային ջուրը: Թվարկի ՀՀ օգտակար հանածոները: • Կարողանա ներկայացնել հայկական երկրորդ պետությունը՝ Արցախի Հանրապետությունը: • Գիտելիքներ ունենա իր փոքրիկ հայրենիքի (գյուղ, քաղաք) մասին: Իր փոքրիկ հայրենիքի մասին ներկայացնի ավանդույթներ, կարողանա պատմել ավանդապատումներ կամ պատմություններ, ներկայացնի իր փոքրիկ հայրենիքի հուշարձանները, հուշակոթողները և տեղանունները:	
1	3, 5	Դաս 1 - Մեր հայրենիքը Հայաստանն է Դաս 2 – Հայկական լեռնաշխարհ
1	13	Դաս 3 – Հայոց բնօրրանը
1	17	Դաս 4 – Հայաստանի Հանրապետություն
1	23	Դաս 5 – Արցախի Հանրապետություն
1	28	Դաս 6 - Իմ Հայրենիքի փոքր անկյունը
Ժամ 2	**Էջ 36- 44**	**Թեմա 2: Իմ լեզուն, իմ հավատը, իմ եկեղեցին (2 ժամ)**
Նպատակը	• Իմանա, որ հայերենը Հայաստանի պետական լեզուն է • Գիտակցի մայրենի լեզվի դերն ու նշանակությունը յուրաքանչյուր մարդու և ժողովրդի կյանքում: • Տեղեկություններ ձեռք բերի հայոց լեզվի զարգացման մասին: • Կարողանա ներկայացնել հայերենի բարբառները: • Իմանա առաքելական բառի նշանակությունը • Իմանա քրիստոնեության ընդունման պատմությունը Հայաստանում • Գիտակցի, թե ի՞նչ դեր ունի եկեղեցին Հայ ժողովրդի ազգապահպանման գործում:	

Վերջնար-դյունքները	• Կարողանա ներկայացնել Հայաստանի պետական լեզվի զարգացման փուլերը, և գրական լեզվի ճյուղերը: • Կարողանա տարբերակել գրական հայերենի և բարբառի տարբերությունը: • Կարողանա ներկայացնել հայ եկեղեցու անվան պատմությունը: • Կարողանա ներկայացնել Հայաստանում քրիստոնեության ընդունման տարեթիվը:	
1	36	Դաս 7,8 - Մեր լեզուն հայերենն է:
1	42	Դաս 9 – Իմ հավատը, իմ եկեղեցին
1		Թեմատիկ գրավոր աշխատանք
Ժամ 10	**Էջ 45-94**	**Թեմա 3: Պատմություններ մեր հայրենիքի մասին (10 ժամ)**
Նպատակը	• Իմանա, մեր հայրենիքի անցյալը, առասպելները: • Իմանա հայ արքայատոհմերը և արքաներին. Վանի թագավորություն, Արտաշեսյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ, Կիլիկիայի թագավորություն: • Իմանա Հեթումյան արքայատոհմի ստեղծման պատճառները: • Իմանա Հայոց Երեք հանրապետությունների ստեղծման տարթվերը և նշանավոր գործիչներին:	
Վերջնար-դյունքները	• Կարողանա ներկայացնել հայ ժողովրդի պատմությունն ու առասպելները: • Կարողանա պատմել առասպելները և բնութագրել նրանց հերոսներին: • Կարողանա ներկայացնել Վանի թագավորության արքաներին. Մենուա, Արգիշտի: • Կարողանա ներկայացնել Արտաշեսյանների արքայատոհմի արքաներին և նրանց գործունեությունը. Արատշես I, Տիգրան Մեծ: Արշակ II, Պապ: • Կարողանա ներկայացնել Արշակունիներ արքայատոհմի արքաներին և նրանց գործունեությունը. Տրդատ III Արշակ II, Պապ: • Կարողանա ներկայացնել Բագրատունիների արքայատոհմի արքաներին և նրանց գործունեությունը. Աշոտ I, Գագիկ I: • Կարողանա ներկայացնել Կիլիկիայի հայկական թագավորության արքաներին և նրանց գործունեությունը. Ռուբեն I, Լևոն II Մեծագործ, Զաբել, Հեթում I: • Կարողանա համառոտ տեղեկություններ տալ Հայոց անկախ պետականության վերածննդի ու անցած ուղու մասին 1918-1991թթ.:	
1	45	Դաս 10 - Պատմություն և առասպել
1	49	Դաս 11 - Առասպելներ
1		Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք
1	55	Դաս 12 – Բիայնա երկրի արքաներ
1	60	Դաս 13 - Արտաշեսյաններ
1	67	Դաս 14-15 Արշակունիներ
1	76	Դաս 16 - Բագրատունիներ
1	81	Դաս 17 – Կիլիկիայի Հայոց պետությունը
1	87	Դաս 18 – Հայոց պետականության վերածնունդը
1	93	Դաս 19 – Կրկնություն
1		Թեմատիկ գրավոր աշխատանք
Ժամ Էջ	Թեմա՝ **Մեր երկրի մշակույթը (11 ժամ)**	
Նպատակը	• Իմանա, թե ի՞նչ է մշակույթը: • Կարևորի և արժեվորի հայ մշակույթի անցյալն ու ներկան:	

	• Կարողանա ներակայացնի գրերի գյուտն ու Ոսկեդարի պատմական նշանակությունը: • Ծանոթանա հայ մշակույթի նշանավոր գործիչներին: • Հայոց մայրաքաղաքներ:
Վերջնար-դյունքները	• Սահմանի, թե ի՞նչ է մշակույթը: • Կարողանա բացատրի, թե ինչու է էպոսը համարվում ազգային բնավորության գծերի արտացոլում, «Սասունցի Դավիթ» էպոսի օրինակով: • Ներկայացնի գրերի ստեղծման պատմությունը և նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: • Թվարկի ոսկեդարյան գրականության ներկայացուցիչներին, անդրադառնալով Մովսես Խորենացուն: • Տարբերակի գիտության բնագավառները՝ փիլիսոփայություն և բնական գիտություններ (Դավիթ Անհաղթ, Շիրակացի): • Ճանաչի հայ ազգային գրականության հիմնադիրներին (Նարեկացի, Սայաթ-Նովա): • Գնահատի և կարողանա ներկայացնի հայ նոր և նորագույն գրականության մեծերին՝ Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Վիլյամ Սարոյան: • Ներկայացնի հայ ազգային երաժշտության հիմնադիր Կոմիտասին և արժեվորի նրա դերը ազգային երաժշտության պահպանման գործում: • Ճանաչի հայ մեծանուն երգահաններին (Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Շառլ Ազնավուր): • Թվարկի հայ երգահանների ստեղծագործությունները: • Ծանոթանա հայ կերպարվեստի հայտնի դեմքերին (Հովհաննես Այվազովսկի, Արշիլ Գորկի, Մարտիրոս Սարյան): • Ներկայացնի հայ կերպարվեստի ներկայացուցիչների լավագույն օրինակները: • Կարողանա ներկայացնի, թե ի՞նչ է ժողովրդական մշակույթը և թվարկի տեսակները. ոսկերչություն, խեցեգործություն, դարբնություն, գինեգործություն, տարազ, խոհանոց: • Տարբերակի արհեստն ու արվեստը: • Իմանա, թե՞ ով է ճարտարապետը և ի՞նչ դեր է կատարում կառույցի ստեղծման գործում: • Ճանաչի հայ ճարտարապետներին. միջնադարից մինչև մեր օրերը: • Կարողանա թվարկել և ներկայացնել Մանուելի, Տրդատի, Մոմիկի, Ալեքսանդր Թամանյանի և Ռաֆայել Իսրայելյանի նախագծած ճարտարապետական լավագույն կառույցները: • Թվարկիր հայոց 12 մայրաքաղաքները: • Կարողանա ներկայացնել մայրաքաղաքներից Անին, որպես միջնադարյան մայրաքաղաք և Երևանը՝ որպես մերօրյա մայրաքաղաք:

1	95	Դաս 20. Հայ մշակույթի անցյալն ու ներկան
1	99	Դաս 21. Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև
1	103	Դաս 22. Մովսես Խորենացի
1	106	Դաս 23. Դավիթ Անհաղթ և Անանիա Շիրակացի
1	109	Դաս 24. Հայ գրականության մեծանուն ներկայացուցիչները
1	116	Դաս 25. Հայ երգի մեծերը
1	122	Դաս 26. Հայ կերպարվեստի խոշոր դեմքերը

1	127	Դաս 27. Հայ ժողովրդական մշակույթը
1	134	Դաս 28. Ճարտարապետություն
1	141	Դաս 29. Հայոց մայրաքաղաքները
1	149	Դաս 30. Քաղաքամայր Երևանը
1	153	Դաս 31-32 – Կրկնություն
1		Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք
1		Կիսամյակի ամփոփում

Գլուխ 1: ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

Դաս 1 - ՄԵՐ ՀԱՅԵՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

Դաս 2 – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հայերը իրենց հայրենիքը կոչում են

ա. Արմենիա բ. Սոմխեթի գ. Հայք դ. Հայաստան

2. Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը

ա. Արագած բ. Արարատ գ. Սիփան

3. Ի՞նչ անունով է հայտնի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասը

ա. Մեծ Հայք բ. Աշխարհ գ. Միջնաշխարհ

4. Ո՞րն է մեր հայրենիքի Մայր գետը
ա. Տիգրիս բ. Ճորոխ գ. Եփրատ դ. Արաքս

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ինչպես են հայերը կոչում իրենց հայրենիքը:
2. Իմանա Հայաստան աշխարհի ամենաբարձր լեռնագագաթը,
3. Իմանա, թե ինչո՞ւ են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասն անվանում միջնաշխարհ:
4. Իմանա, թե ինչու են Արաքս գետը անվանում Մայր գետ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա քարտեզով ցույց տալՀայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը:
2. Կարողանա նշի Արարատ լեռան բարձրությունը և նշի թե այլ կերպ ինչպես են անվանում Արարատը:
3. Կարողանա նկարագրել Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասը՝ Միջնաշխարհը:
4. Կարողանա ներակայացնել, թե որտեղից է սկիզբ առնում Արաքս գետը, և որ դաշտով է այն հոսում:

Դաս 3 – ՀԱՅՈՑ ԲՆՕՐՐԱՆԸ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է հայ ազգի բնօրրանը, հայրենիքը

ա. Հայկական լեռնաշխարհ բ. Հայոց տուն գ. Բիայնա

2. Ի՞նչ ես հասկանում Պատմական Հայաստան ասելով

---

3. Ո՞ր թվականին կորցրեց հայ ժողովուրդը իր հայրենիքի մեծագույն մասը

ա. 1915-1916թթ. բ. 1825-1827թթ. գ. 1630-37թթ.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, բնօրրան բառի բացատրությունը:
2. Իմանա, թե ո՞ր տարածքի հետ է համընկնում պատմական Հայաստանը:
3. Իմանա, թե ո՞ր թվականին է տեղի ունեցել Հայոց մեծ եղեռնը՝ Ցեղասպանությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա բացատրել բնօրրան, հայրենիք հասկացությունները:
2. Կարողանա ներկայացնել պատմական Հայաստանը կորցնելու պատճառները:
3. Կարողանա բացատրել թե ի՞նչ է ցեղասպանությունը:

Դաս 4 – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հայկական լեռնաշխարհի ո՞ր մասն է կազմում Հայաստանի Հանրապետությունը
ա. Հարավային բ. Հարավարևմտյան գ. Հյուսիսարևելյան

2. Հայաստանի հանրապետության ամենաբարձր լեռը
ա. Արարատ բ. Արագած գ. Կապուտջուղ

3. Ի՞նչ օգտակար հանածոներով է հարուստ Հայաստանի Հանրապետությունը

ա. Նավթ, երկաթ, պղինձ
բ. Գազ, բրոնզ, մոլիբդեն
գ. Պղինձ, երկաթ, ոսկի

4. Թվարկիր Հայաստանի խոշոր քաղաքները

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե Հայաստանի Հանրապետությունը Հայկական լեռնաշխարհի ո՞ր մասն է զբաղեցնում:
2. Իմանա, թե ո՞րն է Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռը:
3. Իմանա, թե ի՞նչ օգտակար հանածոներով է հարուստ Հայաստանի Հանրապետությունը:
4. Իմանա, թե Հայաստանի Հանրապետությունում ինչ խոշոր քաղաքներ կան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ցույց տալ Հայաստանի Հանրապետության դիրքը քարտեզի վրա:
2. Կարողանա նկարագրել Արագածը:
3. Կարողանա ներկայացնել, թե ինչ է օգտակար հանածոն:
4. Կարողանա ներկայացնել ՀՀ խոշոր քաղաքները:

Դաս 5 – ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ե՞րբ է ստեղծվել Արցախի Հանրապետությունը

ա. 1991թ. սեպտեմբերի 2 բ. 1988թ. փետրվարի 4 գ. 1920թ. մարտի 7

2. Թվարկիր Արցախում քեզ հայտնի վանքերն ու եկեղեցիները

---

3. Ո՞րն է Արցախի Հանրապետության մայրաքաղաքը

ա. Մարտունի բ. Շուշի գ. Ստեփանակերտ

4. Արցախյան ազատամարտերի ինչ հերոսներ գիտես

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ե՞րբ է ստեղծվել Արցախի Հանրապետությունը:
2. Իմանա, թե ի՞նչ եկեղեցիներ և վանքեր կան Արցախում:
3. Իմանա, թե ո՞րն է Արցախի Հանրապետության մայրաքաղաքը:
4. Իմանա, Արցախյան հերոսամարտերի հերոսներին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Արցախի անկախության ուղին:
2. Կարողանա նկարագրել որևէ եկեղեցի կամ վանք:
3. Կարողանա ցույց տալ քարտեզի վրա Արցախի մայրաքաղաքը՝ Ստեփանակերտը:
4. Կարողանա թվարկել Արցախյան հերոսամարտերի հերոսներին:

Դաս 6 - ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՈՔՐ ԱՆԿՅՈՒՆԸ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է ծննդավայրը

ա. Վայր, որտեղ ծնվել ես և մեծացել

բ. Վայր, որտեղ ապրում է քո ընտանիքը

գ. Վայր, որտեղ ծնվել են հարազատներդ

2. Ի՞նչ ես հասկանում Փոքր Հայրենիք ասելով

---

3. Պատմիր քո բնակավայրի մասին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ի՞նչ է ծննդավայրը:
2. Իմանա, թե ո՞րն է իր Փոքր հայրենիքը:
3. Իմանա, իր բնակավայրի պատմությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել ծննդավայր բառի բացատրությունը:
2. Կարողանա բացատրել Փոքր հայրենիք հասկացությունը:
3. Կարողանա պատմել և նկարագրել իր բնակության վայրը:

Գլուխ 2: ԻՄ ԼԵԶՈՒՆ, ԻՄ ՀԱՎԱՏԸ, ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ

Դաս 7,8 - ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՀԱՅԵՐԵՆՆ Է

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թվարկիր գրավոր հայերենի զարգացման փուլերը:

---

2. Ի՞նչ ճյուղեր ունի գրական հայերենը:

---

3. Ի՞նչ ես հասկանում բարբառ ասելով:

---

4. Նշիր հայերենի բարբառների թիվը
ա. 40 բ. 60 գ. 100

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե քանի՞ փուլերով է անցել հայերենը:
2. Իմանա, գրական հայերենի ճյուղերը:
3. Իմանա, թե ի՞նչ է բարբառը:
4. Իմանա հայերենի բարբառների թիվը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել գրական հայերենի զարգացման փուլերը:
2. Կարողանա ներկայացնել աշխարհաբար հայերենի զարգացման ճյուղերը:
3. Կարողանա ներկայացնել գրական լեզվի և բարբառի տարբերությունը:
4. Կարողանա ներկայացնել իրեն հայտնի բարբառները:

Դաս 9 – ԻՄ ՀԱՎԱՏԸ, ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս է կոչվում Հայոց եկեղեցին
ա. Հայ առաքելական եկեղեցի
բ. Հայ ուղղափառ եկեղեցի
բ. Հայ կաթոլիկ եկեղեցի

2. Որ արքայի օրոք պաշտոնապես ընդունվեց քրիստոնեությունը Հայաստանում

ա. Տիգրան II
բ. Տրդատ III
գ. Խոսրով I

3.Հայերը պաշտոնապես քրիստոնեությունը ընդունել են
ա. Ավելի քան 1700 տարի առաջ
ա. Մոտ 3000 տարի առաջ
գ. Ավելի քան 4000 տարի առաջ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ինչպե՞ս է կոչվում Հայոց եկեղեցին
2. Իմանա, թե հայ արքաներից ո՞վ է ընդունել քրիստոնեությունը, որպես պետական կրոն:
3. Իմանա, քրիստոնեության ընդունման տարեթիվը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա մեկնաբանել, թե ինչո՞ւ է Հայ եկեղեցին կոչվում առաքելական:
2. Կարողանա շարադրել քրիստոնեության ընդունման պատմությունը:
3. Կարողանա հաշվարկել, թե քանի՞ դար է անցել քրիստոնեության ընդունումից մինչ մեր օրերը:

Գլուխ 3: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Դաս10 – ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՍՊԵԼ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է առասպելը:
---

2. Ի՞նչպիսին են առասպելների հերոսները:
ա. վախկոտ
գ. խորամանկ
դ. Քաջ

3. Ո՞վ է գրի առել հայ ժողովրդական առասպելները:
ա. Փավստոս Բուզանդ
գ. Ղազար Փարպեցի
դ. Մովսես Խորենացի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ի՞նչ է առասպելը:
2. Իմանա, թե ինչպիսինն են առասպելի հերոսները:
3. Իմանա, թե ում շնորհիվ են մեզ հասել հայ ժողովրդական առասպելները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա տարբերակել առասպելը պատմությունից:
2. Կարողանա տարբերակել առասպելական հերոսներին սովորական մարդկանցից:
3. Կարողանա շարադրել, թե Մ.Խորենացին ումից է լսել հայկական առասպելապատում զրույցները:

Դաս11 – ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թվարկիր, թե ի՞նչ առասպելներ գիտես:

---

2. Ի՞նչ անունով էր հայտնի Վահագնը:

ա. Անգեղ, բ. Զորավոր գ.Վիշապաքաղ

3. Ո՞վ էր Խորենացու առասպելական սիրելի հերոսը:

ա. Արամ բ. Արա Գեղեցիկ գ.Տորք Անգեղ

4. Բնութագրիր Արա Գեղեցիկին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, հայկական ժողովրդական առասպելները:
2. Իմանա, թե ո՞վ էր Վահագնը:
3. Իմանա, թե ինչո՞ւ է Խորենացու սիրելի հերոսը՝ Արամը:
4. Իմանա, թե ինչու է Արային անվանում Գեղեցիկ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա պատմել որևէ առասպել:
2. Կարողանա ներկայացնել Վահագնի ծնունդը:
3. Կարողանա բնութագրել Արա Գեղեցիկին:

Դաս 12 – ԲԻԱՅՆԱ ԵՐԿՐԻ ԱՐՔԱՆԵՐԸ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է Վանի թագավորության մայրաքաղաքը

ա. Արգիշտիխինիլ, բ. Տուշպա գ. Մենաուախինիլ

2. Վանի թագավորության ի՞նչ նշանավոր արքաներ գիտես

---

3. Քանի՞ կիլոմետր է ձգվում Մենուայի կառուցած ջրանցքը

ա. 72կմ, բ. 120կմ, գ. 27կմ

4. Երբ է կառավարել Արգիշտի I-ը:

ա. Ք.ա. 810-786թթ., բ. Ք.ա. 835-810թթ., գ. Ք.ա. 786-764թթ.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, թե ո՞րն է Վանի թագավորության առաջին մայրաքաղաքը:

2.Իմանա, Վանի թագավորության նշանավոր արքաներին:

3.Իմանա, թե քանի կմ է ձգվում Մենուայի ջրանցքը:

4.Իմանա, Արգիշտի I-ի կառավարման տարեթվերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Տուշպա-Վանի հիմնադրման դարաշրջանն ու հիմնադրին:
2. Կարողանա թվարկել Վանի թագավորության արքաներին:
3. Կարողանա տալ տեղեկություններ Մենուայի ջրանցքի մասին:
4. Կարողանա ներկայացնել Արգիշիտի արքայի գործունեությունը:

Դաս 13 – ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ե՞րբ է հիմնադրվել Արտաշեսյան արքայատոհմը
ա.Ք.ա. 189թ, բ. Ք.ա. 160թ., գ. Ք.ա. 201թ.

2. Ո՞վ է Արտաշեսյան արքայատոհմի հիմնադիր արքան
ա. Մենուա, բ. Արգիշտի, գ. Արտաշես I

3. Ե՞րբ է գահակալել Տիգրան Մեծը:
ա. Ք.ա. 95-55թթ, բ. Ք.ա. 65-25թթ., գ. Ք.ա. 45-25թթ.

4. Ի՞նչ տիտղոս էր կրում Տիգրան Մեծ արքան
ա.Մեծ արքա, բ. Արքայից արքա, գ. Հզոր արքա

5.Ի՞նչ է տեղի ունեցել Ք.ա. 66 թվականին
ա. Հողային բարեփոխումներ
բ. Հռոմի դեմ պատերազմ
գ. Արտաշատի պայմանագիր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ե՞րբ է հիմնադրվել Արտաշեսյան արքայատոհմը:
2. Իմանա, Արտաշեսյան արքայատոհմի հիմնադիր արքայի անունը:
3. Իմանա, Տիգրան Մեծի գահակալման տարեթվերը:
4. Իմանա, թե ինչ տիտղոս էր կրում Տիգրան Մեծ արքան:
5. Իմանա, Արտաշատի պայմանագրի տարեթիվը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Արտաշեսյան արքայատոհմի հիմնադրումը:
2. Կարողանա ներկայացնել Արտաշես I-ի գործունեությունը:
3. Կարողանա ներկայացնել Տիգրան Մեծի գահակալումը:
4. Կարողանա ներկայացնել Տիգրան Մեծի գործունեությունը:

Դաս 14 –15 ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Արշակունյաց արքայատոհմի ի՞նչ արքաներ գիտես

---

2. Ո՞վ է Արշակունյաց արքայատոհմի հիմնադիր արքան Հայաստանում:

ա. Վաղարշ I, բ. Տրդատ I, գ. Խոսրով I

3. Արշակունյաց ո՞ր արքան Քրիստոնեությունը հռչակեց որպես պետական կրոն

ա. Վաղարշ I, բ. Տրդատ III, գ. Խոսրով II

4. Ի՞նչ գիտես Արշակ II-ի մասին:
---

5. Ո՞ր ճակատամարտում Պապ թագավորը փայլուն հաղթանակ տարավ պարսից զորքերի նկատմամբ:

ա. Ձիրավի ճակատամարտ, բ. Ավարայրի ճակատամարտ,
գ. Ակոռի ճակատամարտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, Արշակունյաց արքայատիմի արքաներին:
2. Իմանա, Հայաստանում Արշակունյաց արքայատոհմի հիմնադիր արքայի անունը:
3. Իմանա, թե որ արքայի օրոք հռչակվեց Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն:
4. Իմանա, Արշակ II-ի և Շապուհի հանդիպման պատմությունը:
5. Իմանա, թե որ ճակատամարտում Պապ թագավորի կողմից պարտվեցին պարսից զորքերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա թվարկել Արշակունյաց արքայատոհմի արքաներին:
2. Կարողանա ներկայացնել Արշակունյաց արքայատոհմի հիմնադրման պատմությունը:
3. Կարողանա ներկայացնել Քրիստոնեության ընդունման պատմությունը:
4. Կարողանա վերլուծել հայրենիքի հողի ու ջրի ուժը Արշակ II- և Շապուհ հանդիպման ժամանակ:
5. Կարողանա ներկայացնել Պապ թագավորի գործունեությունը:

Դաս 16 ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր դարաշրջանում հաստատվեց Բագրատունիների հայկական թագավորությունը:

ա. 7-րդ դար, բ. 8-րդ դար, գ. 9-րդ դար

2. Ո՞ր թվականին գահ բարձրացավ Աշոտ I Բագրատունին

ա. 855թ., բ. 825թ., գ. 885թ.

3. Ի՞նչ անունով էր հայտնի Աշոտ II Բագրատունին:

ա. Երկաթ, բ. Բարեպաշտ, գ. Զորավոր

4. Ինչ նշանավոր շինություններ են կառուցվել Գագիկ I-ի օրոք

---

5. Ո՞ր թվականին բյուզանդական բանակը գրավեց Անին

ա. 1071թ., բ. 1045թ., գ. 961թ.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե երբ է հաստատվել Բագրատունիների թագավորությունը:
2. Իմանա, Աշոտ I Բագրատունու գահակալման տարեթիվը:
3. Իմանա, Աշոտ II Բագրատունու մականունը:
4. Իմանա, Գագիկ I-ի օրոք կառուցված շինությունները:
5. Իմանա, Բագրատունյաց թագավորության անկման տարեթիվը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Բագրատունիների հիմնադրման պատմությունը:
2. Կարողանա ներկայացնել Բագրատունյաց արքայատոհմի առաջին արքային:
3. Կարողանա ներկայացնել Աշոտ Երկաթի սխրանքները:
4. Կարողանա նշել Գագիկ I-ի օրոք կառուցված եկեղեցիների ճարտարապետին:
5. Կարողանա պատմել Բագրատունյաց թագավորության անկման պատճառները:

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ էր Ռուբինյան իշխանության հիմնադիրը Կիլիկիայում
ա. Ռուբեն իշխան բ. Գագիկ I, գ. Աշոտ իշխան

2. Ո՞ր թվականին հիմնադրվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը
ա. 1208թ., բ. 1198թ., գ. 1101թ.

3. Որտե՞ղ տեղի ունեցավ Լևոն II Մեծագործի թագադրումը
ա. Սիս քաղաքում, բ. Այաս քաղաքում, գ. Տարսոն քաղաքում

4. Ո՞րն է Կիլիկյան թագավորության մայրաքաղաքը
ա. Սիս քաղաքում, բ. Այաս քաղաքում, գ. Տարսոն քաղաքում

5. Զաբել արքայադստեր և Հեթում իշխանի ամուսնությունից հիմնադրված նոր արքայատոհմ.
---------- արքայատոհմ:

6. Նշիր Կիլիկյան հայկական թագավորության անկումը
ա. 1362թ., բ. 1173թ., գ. 1375թ.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, Կիլիկիայի հայկական իշխանության հիմնադրի անունը:
2. Իմանա, թե երբ է հիմնադրվել Կիլիկիայի հայկական թագավորությունը:
3. Իմանա, Լևոն II Մեծագործի թագադրման վայրը:
4. Իմանա, Կիլիկիայի թագավորության մայրաքաղաքը:
5. Իմանա, Կիլիկիայի թագավորության Հեթումյանների արքայատոհմի մասին:
6. Իմանա, թե երբ է անկում ապրել Կիլիկիայի հայկական թագավորությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Ռուբինյանների իշխանության հաստատումը:
2. Կարողանա ներկայացնել Կիլիկիայի հայկական թագավորությանը հիմնադրումը:
3. Կարողանա նշել, թե որն է Կիլիկիայի մայրաքաղաքը:
4. Կարողանա ներկայացնել Հեթումյան արքայատոհմի հաստատման մասին:
5. Կարողանա ասել Կիլիկիայի հայկական թագավորության անկման տարեթիվը:

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հայաստանի Առաջին հանրապետության հռչակումը
   ա. 1995թ., բ. 1918թ., գ. 1915թ.

2. Նշիր Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր գործիչներին
   ---

3. Խորհրդային Հայաստանի հիմնադրումը
   ա. 1995թ., բ. 1918թ., գ. 1920թ.

4. Հայաստանի Հանրապետությանը հռչակումը
   ա. 1995թ., բ. 1918թ., գ. 1920թ.

5. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ե՞րբ է հռչակվել Հայաստանի առաջին հանրապետությունը:
2. Իմանա, թե ովքե՞ր են Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր գործիչները:
3. Իմանա, Խորհրդային Հայաստանի հիմնադրման տարեթիվը:
4. Իմանա, Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը:
5. Իմանա, Հայաստանի հանրապետության խորհրդանիշները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը:
2. Կարողանա թվարկել Հայաստանի առաջին հանրապետության գործիչների և նրանց զբաղեցրած պաշտոնները:
3. Կարողանա ներկայացնել Խորհրդային Հայաստանի տարեթիվը:
4. Կարողանա ներկայացնել Հայաստանի երրորդ հանրապետության անկախության հռչկման պատմությունը:
5. Կարողանա ներկայացնել Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները:

Գլուխ 4: ՄԵՐ ԵՐԿՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Դաս 20 – ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս է կոչվում ժողովրդի բանավոր ստեղծագործությունը
---

2. Նշիր սխալ պատասխանը. որը ժողովրդական բանահյուսության տեսակ չէ.
   ա. հեքիաթ բ. վեպ գ. առակ դ. էպոս
3. Հայ ժողովրդի ազգային էպոսը կոչվում է՝
   ---
   4. Ով է առաջինը գրի առել «Սասունցի Դավիթ» էպոսը
   ա. Ղազարոս Աղայան բ. Հովհաննես Թումանյան գ. Գարեգին Սրվանձտյանց

5. Բնութագրիր «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսներին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ինչպե՞ս է կոչվում ժողովրդի բանավոր ստեղծագործությունը:
2. Իմանա, թե ժողովրդական բանահյուսության ինչ տեսակներ կան:
3. Իմանա, թե ինչպես է կոչվում հայ ժողովրդի ազգային էպոսը:
4. Իմանա թե ով է առաջինը գրի առել «Սասունցի Դավիթ» էպոսը:
5. Իմանա, թե ինչպիսինն են «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել, թե՞ ինչ է բանահյուսությունը:
2. Կարողանա թվարկել ժողովրդական բանահյուսության տեսակները:
3. Կարողանա նշել, թե ինչպես է կոչվում հայ ժողովրդի ազգային էպոսը:
4. Կարողանա ներկայացնել բանահավաք Գարեգին Սրվանձտյանցին:
5. Կարողանա ներկայացնել «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսների բնավորության գծերը:

Դաս 21 – ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵՎ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հայ ժողովրդի պատմության մեջ ո՞ր դարն է կոչվում Ոսկե դար
   ա. VIդ. բ. Vդ. գ. IVդ. դ. IIIդ.

2. Ե՞րբ են ստեղծվել հայոց գրերը.
ա. 405թ., բ. 301թ. գ. 451թ. դ. 331թ.

3. Գրերի գյուտի ժամանակ ո՞վ է եղել հայոց կաթողիկոսը
ա. Գրիգոր Լուսավորիչ, բ.Սահակ Պարթև գ.Ներսես Մեծ

4. Ո՞րն է եղել հայերեն թարգմանված առաջին գիրքը
ա. Աստվածաշունչ, բ.Ուրբաթագիրք գ.Աղվեսագիրք

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ո՞ր դարն է կոչվում Ոսկե դար:
2. Իմանա, թե ո՞ր թվականին են ստեղծվել հայոց գրերը:
3. Իմանա, թե 405թ. թվականին ով էր Ամենայն հայոց կաթողիկոսը:
4. Իմանա, թե հայերենով ո՞րն է առաջին թարգմանված գիրքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ասել, թե ինչո՞ւ կոչվում Ոսկե դար:
2. Կարողանա արժեվորել գրերի գյուտի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում:
3. Կարողանա ներկայացնել Սահակ Պարթևի դերը հայոց գրերի ստեղծման գործում:
4. Կարողանա ներկայացնել Աստվածաշնչի թարգամանության անհրաժեշտությունը:

Դաս 22 – ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր դարի պատմիչ է Մովսես Խորենացին
ա. VIդ. բ. Vդ. գ. IVդ. դ. IIIդ.

2. Մովսես Խորենացուն անվանում են՝
ա. Քերթողահայր բ. Երգահան գ. Մանրանկարիչ

3. Մովսես Խորենացու աշխատությունը կոչվում է՝
ա. Նարեկ բ. Հայոց պատմություն գ. Մատյան ողբերգության

4. Ու՞մ է աշակերտն է եղել Մովսես Խորենացին
----------, ----------:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ո՞ր դարում է ստեղծագործել Մովսես Խորենացին:
2. Իմանա, թե ի՞նչ պատվանուններ ուներ Մովսես Խորենացին:
3. Իմանա, թե ինչպե՞ս է կոչվում Մովսես Խորենացու աշխատությունը
4. Իմանա, թե ո՞ւմ է աշակերտել Մովսես Խորենացին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Խորենացու ստեղծագործման դարաշրջանը:
2. Կարողանա ներկայացնել, թե ինչո՞ւ են Խորենացուն կոչում Քերթողահայր:
3. Կարողանա ներկայացնել Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության ընդհանուր բովանդակությունը:
4. Կարողանա ներկայացնել Խորենացու ուսուցիչներին՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոց:

Դաս 23 – ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ԵՎ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր դարի փիլիսոփա է Դավիթ Անհաղթը
   ա. VI- VIIդդ. բ. IV-Vդդ. գ. VII -IXդդ. դ.V - VIդդ.

2. Ինչու՞ էին փիլիսոփա Դավիթին կոչում Անհաղթ
   ---

3. Նշիր, թե գիտության ո՞ր ասպարեզներում է ստեղծագործել Անանիա Շիրակացին.
   ---

4. Ո՞րն է Անանիա Շիրակացու ամենանշանավոր աշխատությունը
   ա. Հայոց պատմություն բ. Աշխարհացույց գ. Մատյան ողբերգություն
5. Ըստ «Աշխարհացույցի» Հայաստանը քանի՞ նահանգի էր բաժանված
   ա. 15 բ. 25 գ. 35

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ո՞ր դարում է ստեղծագործել Դավիթ Անհաղթը:
2. Իմանա, թե ինչպես էին անվանում փիլիսոփա Դավիթին:
3. Իմանա, թե Շիրակացու աշխատանքները գիտության ո՞ր բնագավառներին էին նվիրված:
4. Իմանա, Անանիա Շիրակացու նշանավոր աշխատության անունը:
5. Իմանա, թե քանի նահանգի է բաժանված եղել ըստ «Աշխարհացույցի» Հայաստանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Դավիթ Անհաղթի ստեղծագործման դարաշրջանը:
2. Կարողանա ներկայացնել, թե ինչո՞ւ են փիլիսոփա Դավիթին կոչում Անհաղթ:
3. Կարողանա ներկայացնել գիտության այն ասպարեզները, որտեղ ուսումնասիրություններ է կատարել Անանիա Շիրակացին:
4. Կարողանա ներկայացնել, թե աշխարհագրության ուսումնասիրության մեջ ի՞նչ դեր ունի Շիրակացու «Աշխարհացույցը»:
5. Կարողանա ներկայացնի Շիրակացու «Աշխարհացույցը»:

Դաս 24 - ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵԸ

Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ է ստեղծագործել Գրիգոր Նարեկացին
ա. Հաղպատ բ. Սանահին գ. Նարեկավանք դ. Տաթև

2. Ինչո՞ւ է Նարեկը համարվում հրաշագործ գիրք
---

3. Ո՞րն է Սայաթ Նովայի երաժշտական սիրելի գործիքը
ա. Դաշնամուր բ. Քամանչա գ. Ջութակ դ. Քանոն
4. Ո՞րտեղ է ծնվել Հովհաննես Թումանյանը
ա. Թիֆլիս բ. Կարս գ. Գյումրի դ. Դսեղ

5. Ո՞վ է գրել «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը
ա. Հովհաննես Թումանյան գ. Վիլյամ Սարոյան դ. Եղիշե Չարենց

6. Ի՞նչ լեզվով է ստեղծագործել Վիլյամ Սարոյանը
ա. Հայերեն բ. Ռուսերեն գ. Անգլերեն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, Գրիգոր Նարեկացու գործունեության վայրը:
2. Իմանա, թե ինչո՞ւ է սրբացվել Նարեկացու «Նարեկը»:
3. Իմանա, թե որ գործիքով է սիրել նվագել Սայաթ Նովան:
4. Իմանա Հովհաննես Թումանյանի ծննդավայրը:
5. Իմանա, «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության հեղինակին:
6. Իմանա, թե ինչ լեզվով է գրել Վիլյամ Սարոյանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Նարեկավանքի գտնվելու վայրը:
2. Կարողանա ներկայացնել, թե ինչու է «Նարեկը» համարվել բուժիչ գիրք:
3. Կարողանա ներկայացնել Սայաթ Նովայի սիրելի գործիքը:
4. Կարողանա ներակայնել Դսեղ գյուղը:
5. Կարողանա ներկայացնել «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:
6. Կարողանա ներկայացնել հայ օտարագիր գրողներին:

7. Դաս 25 – ՀԱՅ ԵՐԳԻ ՄԵԾԵՐԸ Թեմատիկ պլան

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է Կոմիտասի իրական անուն ազգանունը
---
2. Քանի՞ ժողովրդական երգ է մշակել Կոմիտասը
ա. 3000 բ. 2000 գ. 4000
3. Ո՞վ է Արամ Խաչատրյանը
ա. Գրող բ. Երգահան գ. Նկարիչ
4. Ի՞նչ գիտես Շառլ Ազնավուրի մասին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա Կոմիտասի անուն ազգանունը:

2. Իմանա, թե որքա՞ն ժողովրդական երգեր է մշակել Կոմիտասը:

3. Իմանա, թե ո՞վ է Արամ Խաչատրյանը:

4. Իմանա, թո ո՞վ է Շառլ Ազնավուրը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել Կոմիտասին:
2. Կարողանա թվարկել Կոմիտասի մշակած ստեղծագործությունները («Կռունկ», «Ծիրանի ծառ», «Կալի երգը»):
3. Կարողանա թվարկել Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները («Գայանե», «Սպարտակ» բալետները և «Առաջին սիմֆոնիան»):
4. Կարողանա ներկայացնել Շառլ Ազնավուրի «Քեզ համար Հայաստան» երգի ստեղծման պատմությունը:

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ է ծնվել Հովհաննես Այվազովսին
ա. Թեոդոսիայում բ. Երևանում գ. Թիֆլիսում

2. Ի՞նչ թեմաներով է նկարել Հովհաննես Այվազովսկին:
ա. Ծովանկարչություն բ. Գեղանկարչություն գ. Դիմանկար

3. Ո՞րն է Ոստանիկ Ադոյանի կեղծանունը

ա. Կոմիտաս բ. Արշիլ Գորկի գ. Չարենց

4. Ո՞ր գույներն են գերիշխում Մարտիրոս Սարյանի կտավներում

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա , թե ո՞րն է Հովհաննես Այվազովսկու ծննդավայրը:

2. Իմանա, թե ի՞նչ թեմաներով է ստեղծագործել Հովհ. Այվազովսկին:

3. Իմանա, թե ինչ կեղծանունով է հայտնի Ոստանիկ Ադոյանը (Արշիլ Գորկու):

4. Իմանա, թե ինչ գույներ է օգտագործել իր կտավներում Մարտիրոս Սարյանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել, թե որտեղ է գտնվում Թեոդոսիան:

2. Կարողանա թվարկել Այվազովսկու հանրաճանաչ կտավները («9-րդ ալիք», «Արարատ» և «Սևանա լիճ»)

3. Կարողանա ներկայացնել Ոստանիկ Ադոյանի կեղծանվան պատմությունը:

4. Կարողանա ներկայացնել Սարյանի գույների ընտրության պատմությունը:

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ժողովուրդը ո՞ր վարպետին է անվանում բրուտ
ա. Կոշկակարին բ. Ատաղձագործին գ. Կավագործին

2. Ինչպե՞ս է կոչվում հայկական բնական ներկը՝
ա. Որդան կարմիր բ. Ալ կարմիր գ. Վառ կարմիր

3. Հայկական գորգերից նշանավոր են՝
ա. Արծվագորգերը բ. Վիշապագորգերը գ. Ծաղկագորգերը

4. Որտե՞ղ է հայտնաբերվել աշխարհի ամենահին կոշիկը
ա. Արզնիի մոտ՝ քարայրում բ. Արենիի մոտ՝ քարայրում գ. Կարմիր բլուրում

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ո՞վ է բրուտը:

2. Իմանա, թե ինչպե՞ս է կոչվում հայկական բնական ներկը:

3. Իմանա, թե հայկական գորգերից նշանավորը որն է:

4. Իմանա, թե Հայաստանի ո՞ր տարածաշրջանում է հայտնաբերվել աշխարհի ամենահին կոշիկը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացանել թե ի՞նչ նյութով է աշխատում բրուտը:

2. Կարողանա բացատրել, թե ինչի՞ց են ստանում որդան կարմիր ներկը:

3. Կարողանա ներկայացնել վիշապագորգը:

4. Կարողանա ներկայացնել աշխարհի ամենահին կոշիկի պատմությունը

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ է Անիի Մայր տաճարի ճարտարապետը

ա. Ալեքսանդր Թամանյան բ. Մանուել գ. Տրդատ

2. Նշված կառույցներից որի՞ հեղինակն է միջնադարյան ճարտարապետ-նկարիչ Մոմիկը

ա. Նորավանք բ. Անի գ. Սուրբ Սոֆիայի տաճար

3. Ո՞վ է նախագծել Երեւան քաղաքի հատակագիծը

ա. Ռաֆայել Իսրայելյան բ. Ալեքսանդր Թամանյան գ. Հակոբ Կոջոյան

4. Ու՞մ նախագծով է կառուցվել Սարդարապատի հուշահամալիրը

ա. Ալեքսանդր Թամանյան բ. Տրդատ գ. Ռաֆայել Իսրայելյան

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա Անիի Մայր Տաճարի ճարտարապետին:

2. Իմանա Ճարտարապետ Մոմիկի ամենահայտնի ստեղծագործությունը:

3. Իմանա Երևանի հատակագծի ճարտարապետին:

4. Իմանա, թե ով է նախագծել Սարդարապատի հուշահամալիրը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել թե որ դարում է ապրել և ստեղծագործել Տրդատը:
2. Կարողանա թվարկել Մոմիկի աշխատանքները (Նորավանքի երկհարկ դամբարան-եկեղեցի, Զորաց եկեղեցի, ասեղնագործ-խաչքարեր, մանրանկարներ):
3. Կարողանա ներկայացնել Ալ.Թամանյանի նախագծով կառուցված շինությունները:
4. Կարողանա ներկայացնել Սարդարապատի հուշահամալիրը:

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թվարկիր պատմական Հայաստանի մայրաքաղաքները

---

2. Ո՞վ է հիմնադրել Արտաշատ մայրաքաղաքը

ա. Վաղարշ I բ. Տիգրան Մեծ գ. Արտաշես I

3. Ո՞րն էր Հայաստանի մայրաքաղաքը Վաղարշ I-ի օրոք

ա. Երևան բ. Վաղարշապատ գ. Դվին

4. Ո՞ր քաղաքն են անվանում հազար ու մի եկեղեցիների քաղաք

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա պատմական Հայաստանի մայրաքաղաքների անունները
2. Իմանա Արտաշատ մայրաքաղաքի հիմնադիր արքայի անունը:
3. Իմանա Վաղարշ I-ի օրոք Հայաստանի մայրաքաղաքի անունը:
4. Իմանա, որ Անին եկեղեցաշատ քաղաք է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ներկայացնել պատմական Հայաստանի մայրաքաղաքները ըստ արքայատոհմերի:
2. Կարողանա նշել, թե ում անունով է կոչվել Արտաշատ մայրաքաղաքը:
3. Կարողանա նշել, թե որ բնակավայրն է վերանվանվել Վաղարշապատ:
4. Կարողանա ներկայացնել ժամանակի մեծ ու զարգացած Անի քաղաքի պատմությունը:

Հարցեր եւ առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ե՞րբ է հիմնադրվել Էրեբունի-Երեւանը

ա. Ք.ա. 810թ. բ. Ք.ա.790թ. գ. Ք.ա.782թ.

2. Ո՞վ է հիմնադրել Էրեբունի-Երեւանը

ա. Մենուա բ. Արգիշտի գ. Սարդուրի I

3. Ինչպե՞ս են անվանում Երեւանը

ա. Վարդագույն քաղաք բ. Ծաղկաշատ քաղաք գ. Քարակերտ քաղաք

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

ա. Իմանա Էրեբունի-Երևանի հիմնադրման տարեթիվը:

2. Իմանա Երևանի հիմնադիր արքայի անունը:

3. Իմանա, թե ինչու են Երևանը անվանում վարդագույն քաղաք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա հաշվել, թե քանի տարեկան է Էրեբունի-Երևանը:

2. Կարողանա ներկայացնել Արգիշտի արքային:

3. Կարողանա ներկայացնել Երևան քաղաքի կառուցման համար օգտագործվող քարատեսակը: